

ՄԱՍԼՈ ՅԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Յուլի 9, 2019թ.
Երևան

Մրցունակության համաշխարհային զեկուլյցի համաձայն Հայաստանի մրցունակությամբ 69-րդն է աշխարհի 141 երկրների մեջ

Համաշխարհային մրցունակության զեկուլյցում երկրների մրցունակությունը գնահատվում է Համաշխարհային մրցունակության ցուցիչի (ՀԱՄ ցուցիչ) միջոցով: Այն մշակվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՉՏՖ) կողմից և հաշվարկվում է մրցունակության 12 հենասյունների հիման վրա:

Ցուցիչի հաշվարկման հիմքում ընկած են վիճակագրական տվյալներ և ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները: Ընկերությունների ղեկավարների ամենամյա հարցումն իրականացվում է ՄՋ-ում ներառված երկրներում՝ ՉՏՖ Նոր տնտեսության և հասարակության կենտրոնի գործընկեր կազմակերպությունների կողմից:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես ՉՏՖ Նոր տնտեսության և հասարակության կենտրոնի գործընկեր Հայաստանում, ներկայացնում է «Համաշխարհային մրցունակության զեկուլյց 2019»-ի հիմնական արդյունքները:

2019թ.-ի զեկուլյցի արդյունքներով առաջատար երեք երկրներն են Սինգապուրը, ԱՄՆ և Հոնկոնգը: Մրցունակությամբ առաջին հնգյակում են նաև Նիդեռլանդները և Շվեյցարիան:

Եվրասիական տարածաշրջանի երկրների խմբում¹ առաջընթաց են արձանագրել Ադրբեջանը (11 կետ), Ղազախստանը (4 կետ), Մոլդովան (2 կետ) և Ղրղզստանը (1 կետ): Խմբում Հայաստանը բարձրացել է 4-րդ տեղ՝ գրանցելով դիրքի բարելավում 1 կետով: Հետընթաց են արձանագրել Վրաստանը (8 կետ), Տաջիկստանը (2 կետ) և Ուկրաինան (2 կետ): Ռուսաստանը պահպանել է 2018թ. դիրքը՝ մնալով խմբի առաջատարը:

Համաշխարհային մրցունակության համաթիվ

	ՀԱՄ 2019	ՀԱՄ 2018	Փոփոխություն
	Տեղ	Տեղ	
Ռուսաստան	43	43	→ 0
Ղազախստան	55	59	↑ 4
Ադրբեջան	58	69	↑ 11
Հայաստան	69	70	↑ 1
Վրաստան	74	66	↓ 8
Ուկրաինա	85	83	↓ 2
Մոլդովա	86	88	↑ 2
Ղրղզստան	96	97	↑ 1
Տաջիկստան	104	102	↓ 2

¹ Չեկուլյցի հեղինակները Եվրասիա տարածաշրջանում ներառել են հետևյալ երկրները՝ ՌԴ, Մոլդովան, Ուկրաինան, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Տաջիկստանը և Ղրղզստանը:

Աշխատուժի շուկա հենասյունով Հայաստանը գրանցել է լավագույն ցուցանիշը և զբաղեցնում է 32-րդ տեղը 141 երկրների մեջ: Լավագույն միավոր գրանցվել է առողջապահության հենասյան համար (80.7 միավոր 100-ից): Վատագույն արդյունքներն ըստ տեղի և միավորի գրանցվել է շուկայի չափ հենասյունով:

Հայաստանի մրցունակության գնահատականն ըստ հենասյունների

ՀԱՄ հենասյունները	ՀԱՄ 2019 տեղ 141 երկրների մեջ	ՀԱՄ 2019 միավոր Առավելագույն 100-ից
Ինստիտուտներ	62	56.2
Ենթակառուցվածքներ	60	69.4
ՏՐՏ յուրացում	59	62.0
Մակրոտնտեսական կայունություն	64	75.0
Առողջապահություն	68	80.7
Հմտություններ	61	66.8
Ապրանքների շուկա	44	59.1
Աշխատուժի շուկա	32	66.4
Ֆինանսական համակարգ	69	60.2
Շուկայի չափ	118	37.5
Գործարար միջավայրի դինամիզմ	57	62.5
Նորարարության կարողություն	62	39.4

■ Լավագույն ■ Վատագույն

Գնաճի ցածր մակարդակը, աշխատավարձային հարկերի ցածր մակարդակը (որպես տոկոս շահույթի նկատմամբ), մասնավոր հատվածի վարկավորման ՀՆԱ նկատմամբ մակարդակը և դրա աճի միտումը, բնակչության էլեկտրաֆիկացման մակարդակը, օտարերկրյա աշխատուժի աշխատանքի ընդունման դյուրինությունը և բիզնես սկսելու համար անհրաժեշտ կարճ ժամանակահատվածը Հայաստանի ուշագրավ առավելությունների շարքում են:

Մրցակցային թերությունների շարքում շարունակում են մնալ սոցիալական կապիտալի ցածր մակարդակը, կապիտալի շուկայի զարգացածության ցածր մակարդակը, աշխատուժի շարժունակությունը երկրի ներսում և մոտակա նավահանգստում մատուցվող ծառայությունների արդյունավետությունը: Հայաստանի ուշագրավ թերություններից է նաև գնողունակության պարիտետով հաշվարկված ՀՆԱ ցուցանիշը, որով Հայաստանը 120-րդն է 141 երկրների մեջ:

Հայաստանի մրցուևակության առավելություններն ու թերությունները

Ուշագրավ առավելություններ	Տեղ	Ուշագրավ թերություններ	Տեղ
Գների սղաճ	1	Ավտոտրանսպորտային կապակցվածություն	114
Աշխատավարձային հարկերի մակարդակ	1	Աշխատուժի շարժունակությունը երկրի ներսում	114
Վարկավորման ճեղքվածք	1	Կապիտալի շուկայի կապիտալիզացիա	116
Էլեկտրականության հասանելիությունը բնակչության համար	2	Սոցիալական կապիտալ	120
Օտարերկրյա աշխատուժ ընդունելու դյուրինություն	7	ՀՆԱ չափ	120
Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրերի քանակ	8	Նավահանգստային ծառայությունների արդյունավետություն*	124

*Գնահատվել է Հայաստանին ամենամոտ նավահանգստի համար:

Նախորդ երկու տարիների ընթացքում դրական տեղաշարժեր են գրանցվել *Հաստատություններ*, *Ենթակառուցվածքներ*, *Մակրոտնտեսական կայունություն* և *Ֆինանսական համակարգ* հենասյուններում:

- Չնայած հանրային կառույցների գնահատականների նշանակալի բարելավումներին՝ այն դեռևս չի բերել սոցիալական կապիտալի բարելավմանը:
- Ենթակառուցվածքներում որոշակի բարելավում են գրանցել երկաթուղային և օդային տրանսպորտային ծառայությունների որակը, Էլեկտրականության և ապահով խմելու ջրի հասանելիության ցուցանիշները:
- Մակրոտնտեսական կայունության հենասյան բարելավումը պայմանավորված է եղել գնաճի թիրախավորված մակարդակում գտնվելու հանգամանքով և պետական պարտքի փոփոխության դրական միտումով:
- Էական դրական տեղաշարժ է գրանցվել ֆինանսական համակարգի և՛ խորության, և՛ կայունության ցուցանիշներով: ՓՄՁ վարկավորման և վենչուրային կապիտալի հասանելիության ցուցանիշների բարելավմանը զուգահեռ կապիտալի շուկայի կապիտալիզացիայի մակարդակը շարունակում է մնալ շատ ցածր:

Մրցունակության գործոնների առավել ուշագրավ բացասական փոփոխությունները կապված են եղել կրթական հաստատությունների շրջանավարտների և ապագա աշխատուժի հմտությունների հետ: Հաշվի առնելով տեխնոլոգիաների դերը տնտեսական զարգացման հետագա փուլում՝ երկրի առաջընթացը և բարեկեցության հասնելու պոտենցիալը պայմանավորված կլինեն ապագային մարտահրավերներին և արագ փոփոխություններին պատրաստ և համապատասխան հմտություններով զինված աշխատուժի առկայությամբ:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Տնտեսություն և արժեքներ»-ը՝ «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը, մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: Կենտրոնի մասնագիտացումը մրցունակության համակողմանի ուսումնասիրությունն է մակրո և միկրո մակարդակներում, կենտրոնանալով հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝ ազգային տնտեսական և ճյուղային ռազմավարություններ, օտարերկրյա ներդրումներ, սփյուռքի ցանցեր և արժեքները գործարար և հանրային ոլորտներում:

«Ի-Վի Քոնսալթինգ»-ը գործարար խորհրդատվական, հետազոտական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

Երևան 0010, Հանրապետության 37

Հեռ.՝ +37410 546434

Էլ-փոստ՝ info@ev.am,

www.ev.am, www.evconsulting.com